[1] Դուրս գրման ամսաթիվ			Հաշիվ վավերագիր (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
6	Նոյեմբեր	2018 թ.		Բ	7370066660
[4] Մատուցման ամսաթիվ				Ճշգրտվող հաշիվ վավերագրի	
6	Նոյեմբեր	2018 թ.		Սերիա	Համար
				Ճշգրտվող հաշիվ վավերագիրի դուրս գրման ամսաթիվ	

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի	
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0 2 6 3 6 7 8 1
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	
[10] Անվանումը	«ԱՎ ԷՔՍՊԵՐՏ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)
[11] Բանկային տվյալները	Արդշինբանկ N 2470103343210000
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ ԹԻՎ 48
[13] Լրացուցիչ տվյալներ	

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի	
[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0 2 6 3 1 2 6 3
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ
[17] Բանկային տվյալները	N 900011000834
[18] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5
[19] Լրացուցիչ տվյալներ	
[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն Լիազորագիր: Համար Ամսաթիվ

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

NN Հ/Հ	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափի միավորը	Ընդհանուր ծավալը կամ ժամանակաշրջանը	Միավորի գինը	Ձեռչ(%)	Արժեքը
1	2	3	4	5	6	7
1	թիվ 13108117 քր գործով դատահաշվապահական և ֆինանսատնտեսական համալիր փորձաքննություն	հատ	1	250000		250000
Ընդամենը						250000

Ծառայություն մատուցող (աշխատանք կատարող)՝ GRIGORYAN NAREK 1514930757

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Ծառայություն (աշխատանք) ստացող՝

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

06/11/2018 14:36:53

ՈՐՈՇՈՒՄ

ԴԱՏԱՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան

« 25 » հոկտեմբերի 2017թ.

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ, արդարադատության ավագ լեյտենանտ՝ Պ.Հ. Աղաբաբյանս, վերանայելով վարույթումս քննվող թիվ 13108117 քրեական գործի նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

Էդմոն Վազգենի Դումոյանը և Էլմիրա Գուրգենի Դումոյանը սույն թվականի մայիսի 2-ին հաղորդում են տվել հանցագործության մասին՝ հասցեագրված Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի պետին հետևյալ բովանդակությամբ.

Էդմոն Դումոյանը 2016թ. ապրիլ ամսից սկսած աշխատել է Երևան քաղաքի Իսակովի 9/2 հասցեում գործող <<Վարդան Պետրոսյան>> Ա/Ձ-ում որպես վաճառող, իսկ վերջինիս մայրը՝ Էլմիրա Դումոյանը, որպես վաճառողի օգնական: 2016թ. սեպտեմբեր ամսից իր և 'Վարդան Պետրոսյան' Ա/Ձ-ի տնօրեն Վարդան Պետրոսյանի հարաբերությունները վատացել են և նույն թվականի նոյեմբեր ամսին Է. Դումոյանը և վերջինիս մայրը՝ Էլմիրա Դումոյանը որոշել են դուրս գալ աշխատանքից: Այնուհետև Վ. Պետրոսյանը ստիպել է վերջիններիս պարտավորագիր ստորագրել 1.500.000 ՀՀ դրամի չափով պարտավորության վերաբերյալ, սակայն Էդմոն Դումոյանը և Էլմիրա Դումոյանը հրաժարվել են ստորագրել այդ պարտավորագիրը: Այնուհետև Վարդան Պետրոսյանը քաղաքացիական հայց է ներկայացրել դատարան ընդդեմ Էդմոն Դումոյանի և Էլմիրա Դումոյանի գումարի բռնագանձման պահանջի մասին և որպես հայցապահանջը հիմնավորող ապացույց հայցադիմումին է կցել 1.543.155 ՀՀ դրամ գումարի պարտավորության վերաբերյալ կեղծ փաստաթուղթ:

Դեպքի առթիվ 2017թ. մայիսի 11-ին Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 349-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 34-178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով հարուցվել է թիվ 13108117 քրեական գործը, որն ըստ տարածքային ենթակայության ուղարկվել է Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժին:

Վկա Վարդան Պետրոսյանը ցուցմունք է տվել այն մասին, որ շուրջ 10 տարի հանդիսանում է <<Վարդան Պետրոսյան>> Ա/Ձ-ի տնօրեն: Նշված կազմակերպությունը գործում է Երևան քաղաքի Ծ. Իսակովի 9/2 հասցեում և իրենից ներկայացնում է մթերային խանութ: Ինչքանով հիշել է 2016թ. մարտ ամսին նշված խանութ-սրահ են եկել Էդմոն Դումոյանը և նրա մայրը՝ Էլմիրա Դումոյանը, ովքեր

իրեն նախկինում անծանոթ են եղել: Նրանք եկել են իր կողմից տրված հայտարարության հիման վրա, որի համաձայն՝ խանութ-սրահի համար փնտրել է վաճառող: Նրանց հետ զրուցելուց հետո որոշել է Է. Դումոյանին ընդունել աշխատանքի որպես վաճառող, իսկ նրա մայրիկը ցանկություն է հայտնել Էդմոնին օգնել աշխատանքները կատարելիս և չի հանդիսացել խանութ-սրահի գրանցված աշխատակից: Բացի Է.Դումոյանից և նրա մայրիկից խանութ-սրահում այդ ժամանակ որևէ այլ անձ չի աշխատել: Այնուհետև խանութ-սրահի բանալու մեկ օրինակը տվել է Է. Դումոյանին և վերջինս սկսել է կատարել իր աշխատանքը: 2016 թվականի հոկտեմբերի 26-ին առողջական խնդիրների պատճառով մեկնել է Ղրիմ և նույն թվականի նոյեմբերի կեսերին, որքանով հիշել է նոյեմբերի 15-ին վերադարձել է ՀՀ: Այդ ամբողջ ընթացքում խանութում աշխատել է Է. Դումոյանը և նրան օգնել է մայրը՝ Էլմիրա Դումոյանը: Քանի որ նշված ժամանակահատածում իր զբաղվածության պատճառով ընդհանրապես հաշվարկ չի կատարվել խանութում, որոշել է ստուգում իրականացնել խանութ-սրահում, որպեսզի պարզվի, թե պակասորդ կա արդյոք, թե ոչ: 2016թ. նոյեմբերի 17-ին խանութ-սրահ է եկել նոր աշխատակիցը, որի անունը և ազգանունը չի հիշել, ով Էդմոն և Էլմիրա Դումոյանների հետ միասին խանութում եղած ապրանքների ընդունում-հանձնում է կատարել, որը ավարտվել է այդ օրը գիշերվա ժամին, կոնկրետ չի հիշել, թե որ ժամին: Հաջորդ օրը գնացել է խանութ-սրահ և հաշվարկի արդյունքում պարզվել է, որ առկա է 1.543.155 ՀՀ դրամի պակասորդ: Դրանից հետո զանգահարել և խանութ-սրահ է կանչել Էդմոն և Էլմիրա Դումոյաններին, որոնց հայտնել է հայտնաբերված պակասորդի մասին, որին ի պատասխան վերջիններս ցանկություն են հայտնել անձամբ հաշվարկ կատարել և համոզվել այդ պակասորդի առկայության մեջ: Այնուհետև Է. Դումոյանի հետ առանձին զրույց է ունեցել, որի ընթացքում նրան հայտնել է, որ եթե գումարը վերջինս է վերցրել, ապա ինքը պատրաստ է ժամանակ տրամադրել, որպեսզի այն հետ վերադարձնեն իրենց հարմար ժամանակահատվածում: Է. Դումոյանը, ոչինչ չպատասխանելով, կանչել է իր մայրիկին, վերջինիս փոխանցել է իր հայտնածը, որից հետո նրանք հրաժարվել են այդ գումարը հետ վերադարձնելուց, փոխարենը հայտնել են, որ հնարավոր է այդ գումարը գողացվել է ինչ-որ մեկի կողմից, սակայն կոնկրետ փաստեր չեն ներկայացրել այդ մասին: Առաջարկել է զանգահարել ոստիկանություն և հայտնել գողության մասին, սակայն նրանք չեն համաձայնվել այդ առաջարկին, որից հետո պատրաստակամություն է հայտնել անձամբ զանգահարելու ոստիկանություն, սակայն չի զանգահարել, քանի որ համաձայնության են եկել պարտավորագիր լրացնել այն մասին, որ Էդմոն և Էլմիրա Դումոյանները պատասխանատու են խանութում կատարված գողությունների և պակասորդների համար: Նշված պարտավորագիրը լրացվել է խանութ-սրահի հաշվապահ Գայանեի կողմից և պարտավորագրում այդ պահին չի նշվել ամսաթիվը և գումարի չափը, քանի որ Էդմոն և Էլմիրա Դումոյանները առաջարկել են վերանայել խանութում եղած ապրանքները, որպեսզի հստակ պարզվի պակասորդի չափը: Այնուհետև վերջիններս վերահաշվարկել են ապրանքները և նույն օրը հայտնել, որ պակասորդի չափը ճիշտ է որոշվել իր կողմից: Դրանից հետո նրանց ներկայությամբ

պարտավորագրում ավելացվել է գումարի չափը՝ 1.543.155 ՀՀ դրամ և ամսաթիվը՝ 18.11.2016թ.: Այնուհետև Էդմոն և Էլմիրա Դումոյաններն ազատվել են աշխատանքից: Հետագայում մի քանի անգամ զանգահարել է Էդմոն Դումոյանին և նրան կանչել է խանութ-սրահ, որպեսզի պայմանավորվեն վնասի փոխհատուցման մասին, սակայն վերջինս հրաժարվել է՝ ասելով. 'Ինչ ուզում եք արեք': Այնուհետև ինքը քաղաքացիական հայց է ներկայացրել Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ պահանջելով Էդմոն և Էլմիրա Դումոյաններից վճարելու իրեն պարտք եղած նշված չափի գումարը, սակայն մինչ օրս նրանք որևէ գումար չեն վճարել: Պարտավորագիրը լրացվել է Է. Դումոյանի և նրա մայրիկի անունից, քանի որ Էլմիրա Դումոյանը նույնպես շատ ժամանակ գտնվել է խանութ-սրահում և օգնել է Էդմոն Դումոյանին աշխատանքները կատարելիս, նույնիսկ եղել են դեպքեր, որ մի քանի ժամով փոխարինել է վերջինիս, որի պատճառով հայտնաբերված պակասորդի համար պատասխանատվությունը բաշխել է նրանց երկուսի վրա:

Ելնելով վերոգրյալից և նկատի ունենալով, որ քրեական գործի համար կարևոր նշանակություն ունեցող մի շարք հարցերի պարզաբանման համար անհրաժեշտ են դատահաշվապահական և տնտեսագիտական հատուկ մասնագիտական գիտելիքներ, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 243-244-րդ, 246-րդ հոդվածների պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Թիվ 13108117 քրեական գործով նշանակել դատահաշվապահական և տնտեսագիտական համալիր փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել «Հույս և Օրենք» ՍՊ ընկերության համապատասխան փորձագետներին:

2. Փորձագետներին պարզաբանման համար առաջադրել հետևյալ հարցերը.

- 01.04.2016թ.-ից մինչև 18.11.2016 թվականը ընկած ժամանակահատվածում «Վարդան Պետրոսյան» Ա/Ձ-ի կողմից ծավալած ձեռնարկատիրական գործունեության արդյունքում ընկերության համախառն եկամուտը (հասույթը) որքան է կազմել:

- 01.04.2016թ.-ից մինչև 18.11.2016 թվականը ընկած ժամանակահատվածում «Վարդան Պետրոսյան» Ա/Ձ-ի կողմից ծավալած ձեռնարկատիրական գործունեության արդյունքում համախառն եկամտի ստացման համար անհրաժեշտ և փաստաթղթերով հիմնավորված որքան և ինչ տեսակի ծախսեր է կատարվել:

- 01.04.2016թ.-ից մինչև 18.11.2016 թվականը ընկած ժամանակահատվածում «Վարդան Պետրոսյան» Ա/Ձ-ի կողմից ծավալած ձեռնարկատիրական գործունեության արդյունքում ընկերությունում դեբիտորական և կրեդիտորական պարտքեր առաջացել են, թե ոչ, եթե այո, ապա առանձին-առանձին ըստ ամիսներ, որքան է այն կազմում և զուտ հաշվապահական հաշվառման տեսանկյունից ինչի հետևանքով են գոյացել նշված կրեդիտորական և դեբիտորական պարտքերը:

- «Վարդան Պետրոսյան» Ա/Ձ-ի հաշվարկային հաշվից 01.04.2016թ.-ից մինչև 18.11.2016 թվականը ընկած ժամանակահատվածում ելքագրված գումարները սահմանված կարգով ընկերության կողմից փաստաթղթավորվել և ստացել են

հաշվապահական ձևակերպումներ, թե ոչ, եթե ոչ, ապա դրա հետևանքով ընկերությանը վնաս պատճառվել է, թե ոչ, եթե այո, ապա որքան է այն կազմում և պատճառված վնասի հարցում ընկերության, որ աշխատակցի կողմից զուտ հաշվապահական հաշվառման տեսանկյունից ինչպիսի խախտումներ են թույլ տրվել:

3. Փորձագետներին տրամադրել սույն որոշումը, իսկ քրեական գործից համապատասխան նյութերի պատճենները կտրամադրվեն առաջին իսկ պահանջի դեպքում:
4. Փորձագետներին իրավունք վերապահել պատասխանել նաև այն հարցերին, որոնք թեև նշված չեն սույն որոշման մեջ, սակայն կառաջանան փորձաքննություն իրականացնելու ընթացքում և կմտնեն փորձաքննություն իրականացնող փորձագետների իրավասության մեջ:
5. Փորձագետներին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85 հոդվածով նախատեսված իր իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338 հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Ավագ քննիչ՝ *Պ.Հ. Աղաբաբյան*